ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2025թ. ապրիլի 29-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 28-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահի առաջարկով, խորհրդի անդամները ծափահարեցին և շնորհավորեցին ֆակուլտետի երախտավոր, անվանի գիտնական, խորհրդի անդամ, ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տեխ.գ.դ. Արամ Հմայակի Առաքելյանի ծննդյան 80-ամյակը: Ֆակուլտետի գիտխորհրդի անունից շնորհավորական ուղերձով հանդես եկավ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը: Ներկայացրեց հոբելյարի մեծ ու անուրանալի վաստակն ու ներդրումը մայր բուհի գիտակրթական կյանքում, շնորհավորական ջերմ խոսքերով մաղթեց նորանոր հաջողություններ, ուժ ու եռանդ:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Մագիստրոսական կրթական նոր ծրագրերի ուսումնական պլանների հաստատում
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի հաստատում
3. Ընթացիկ հարցեր

1. Մագիստրոսական կրթական նոր ծրագրերի ուսումնական պլանների հաստատում

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ուսումնական պլանների հաստատման մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհրդի նախորդ նիստում որոշում է կայացվել «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման վերաբերյալ, իսկ այս նիստում

քննարկվում են կրթական նոր ծրագրի ուսումնական պլանները և՛ առկա (1,5 տարի, 90 ECTS), և՛ հեռակա (2 տարի, 90 ECTS) ուսուցման գծով: Հավելեց, որ, ըստ կարգի, գիտխորհրդի անդամներն էլեկտրոնային ծանուցմամբ նախօրոք ստացել են մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանները և հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը նշեց, որ «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը ներդրվում է Erasmus+ շրջանակում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համատեղ: Այդ նպատակով ԵՊՀ-ում և ՀԱԱՀ-ում ստեղծված աշխատանքային խմբերը ակտիվ աշխատում են 1 տարուց ավելի՝ համագործակցելով արտասահմանյան գործընկերների հետ: Հավելեց, որ մագիստրոսական ծրագրի առկա և հեռակա ուսուցման ուսպլանները մշակվել են երկու համալսարանների համատեղ աշխատանքի արդյունքում՝ արտասահմանյան գործընկերների՝ մասնավորապես միջազգային փորձագետների դիտարկումներն ու նկատառումները հաշվի առնելով: Ամփոփելով զեկուցումը նշեց, որ ամբիոնում ձևավորված աշխատանքային խումբը պատրաստ է հաշվի առնել նաև այն դիտարկումները, որոնք կհնչեն գիտխորհրդում քննարկման ընթացքում՝ ծրագրի լավարկման նպատակով:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Մնացականյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը:

Հարցադրումներն առնչվում էին մագիստրոսական կրթական ծրագրի բովանդակությանը, ուսումնական պլանում ներառված դասընթացների ձևակերպումներին և նկարագրիչներին, ինչպես նաև դասընթացները՝ հատկապես օտար լեզվով (անգլերենով), դասավանդողների ընտրությանը:

4. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ մագիստրոսական ծրագրում ներառված դասընթացները մշակվել են Կայուն զարգացման համատեքստում, և դասընթացներից յուրաքանչյուրի նկարագրիչներն ամփոփում ու հիմնավորում են կոնկրետ դասընթացի ընտրությունը: Նշեց նաև, որ ոլորտային դասընթացները վարելու են ոչ միայն ամբիոնի որոշ աշխատակիցներ, այլև հրավիրվելու են մասնագետներ:

Ելույթներ:

5. Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ազգային ծրագրերի ավագ համակարգող, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը նշեց, որ այսպիսի ծրագրի ներդրումը ժամանակի հրամայականն է, և որ այս համատեքստում ՀՀ ԿԲ-ն որոշակի աշխատանք է տանում՝ կապված կորպորատիվ կառավարման հետ: Հավելեց, որ պետք է ակտիվ աշխատել միջազգային կազմակերպությունների հետ, նաև կարճատև դասընթացներ մշակել ծրագրի շրջանակում, քանի որ դրա պահանջն առկա է աշխատաշուկայում:

6. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը իրենց ելույթներում նշեցին, որ աշխատանքային խումբն աշխատել է տևական ժամանակ և առաջարկեցին քվերկությամբ հաստատել մագիստրոսական կրթական ծրագրի առկա և հեռակա ուսուցման ուսպլանները:

7. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկման արդյունքները, առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել առկա ուսուցման «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի՝ 1,5 տարի տևողությամբ (90 ECTS) և հեռակա ուսուցման՝ 2 տարի տևողությամբ (90 ECTS) ուսումնական պլանները:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ուսպլանների հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 29.04.2025թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել առկա ուսուցման «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի (1,5 տարի, 90 ECTS) և հեռակա ուսուցման «Կանաչ տնտեսություն և կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի (2 տարի, 90 ECTS) ուսումնական պլանները՝ քվեարկության 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

1.2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ուսումնական պլանների հաստատման մասին հարցը:

1.2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհրդի նախորդ ուստարվա 07.06.2024թ. թիվ 9 նիստում որոշում է կայացվել «Ստարտափների կառավարում» (դասավանդման լեզուն՝ անգլերեն) մագիստրոսական կրթական նոր ծրագրի ստեղծման վերաբերյալ, իսկ այս նիստում քննարկվում են կրթական նոր ծրագրի ուսումնական պլանները և՛ առկա (1 տարի, 60 ECTS), և՛ հեռակա (1,5 տարի, 60 ECTS) ուսուցման գծով: Հավելեց, որ, ըստ կարգի, գիտխորհրդի անդամներն էլեկտրոնային ծանուցմամբ նախօրոք ստացել են նաև այս մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանները և հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

2. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը նշեց, որ «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի հիմնական թիրախը օտարերկրյա ուսանողներն են՝ դասընթացն իրականացվելու է անգլերենով, և որ այս կրթական ծրագրի նախապատրաստական աշխատանքների մեկնարկը տրվել է 2023թ. նոյեմբերին՝ Երևանի պետական համալսարանի, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի և «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի միջև կնքված եռակողմ համաձայնագրի ստորագրման պահից: Հավելեց, որ մագիստրոսական ծրագրի առկա և հեռակա ուսուցման ուսպլանները մշակվել են

«Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամի հետ պարբերաբար իրականացված աշխատանքային քննարկումների արդյունքում՝ ուսպլանների կառուցվածքին և դասընթացների բաժիններին, նաև մասնագետներների ընտրությանն ու հմտություններին առնչվող բոլոր հարցերը հստակեցվել են համատեղ քննարկումների ժամանակ: Ամփոփելով զեկուցումը նշեց, որ ինչպես նախորդ ծրագրի, այնպես էլ այս ծրագրի լավարկման նպատակով, ամբիոնում ձևավորված աշխատանքային խումբը պատրաստ է հաշվի առնել բոլոր այն դիտարկումները, որոնք կհնչեն գիտխորհրդում քննարկման ընթացքում:

3. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Մնացականյանը, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը:

Հարցադրումներն առնչվում էին մագիստրոսական կրթական ծրագրի բովանդակությանը և՛ ուսումնական, և՛ հետազոտական կառուցամասի առնչությամբ՝ մասնավորապես, ուսումնական կառուցամասում ընդգրկված հետազոտական բաղադրիչով 5 դասընթացների, իսկ հետազոտական կառուցամասում՝ թեզի պաշտպանության նպատակահարմարությանը, ինչպես նաև ծրագրի պոտենցիալ շահառուներին:

4. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ մագիստրոսական կրթական ծրագրի կառուցամասերը մշակվել են համատեղ քննարկման արդյունքում հետևյալ տրամաբանությամբ՝ 2-րդ ընթացիկ քննությանը տեսական նյութի փոխարեն նախագծային աշխատանք է ներկայացվելու, իսկ մագիստրոսական թեզի հետ կապված նախատեսվում է, որ թեզի կիրառական մասը կլինի ստարտափ մոդելը՝ սովորողները կգեներացնեն իրենց գաղափարը: Ծրագրի պոտենցիալ շահառուների առնչությամբ հավելեց, որ ստարտափով զբաղվողներն ունեն կառավարման հմտությունների պակաս:

5. Դոցենտ, տ.գ.թ. Կ.Եղոյանը, ողջունեց այն փաստը, որ մագիստրոսական նոր ծրագիրն ունի գործընկեր և հարց հնչեցրեց. թե արդյո՞ք գործընկեր կազմակերպությունը կնպաստի ուսանողների ներգրավմանը:

6. Դոցենտ, տ.գ.թ. Ա.Հակոբջանյանը պատասխանելով հնչեցված հարցին նշեց, որ «Ստարտափ Արմենիա» գիտակրթական հիմնադրամն իրապես շահագրգռված է այս ծրագրի ներդրման հարցում, պատրաստ է աջակցել նաև ֆինանսավորման տեսանկյունից:

Ելույթներ:

7. Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ազգային ծրագրերի ավագ համակարգող, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը, մագիստրոսական ծրագրի կարևորությունն ընդգծելով, իր ելույթում առաջարկեց ընդլայնել ծրագրի շահառուների շրջանակը և ներառել ստարտափների էկոհամակարգերում՝ մասնավորապես, վենչուրային ֆոնդերում աշխատողներին: Ընդգծեց, որ ֆինանսների հայթայթումը այս համատեքստում խիստ կարևոր է, իսկ ծրագրում ներառված ֆինանսական մասը բավարար չէ՝ հատկապես ստարտափների կառավարման հմտությունների զարգացման տեսանկյունից:

8. Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, հնչեցված առաջարկը կարևորելով, ընդգծեց, որ լրացուցիչ և մանրամասն քննարկում է պետք տ.գ.թ. Ա.Փոքրիկյանի կողմից առաջարկվող «Ստարտափների կառավարում» դասընթացը ծրագրում ներառված մեկ այլ դասընթացի փոխարեն ընդգրկելու համար: Հավելեց, որ առկա և հեռակա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական ծրագրի ուսումնական պլաններում առաջարկվող փոփոխությունը կատարելու հնարավորություն կա մինչև լիցենզավորումը: Առաջարկեց «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագիրը հաստատել քննարկվող ձևաչափով, իսկ ծրագրի փորձագիտական հանձնաժողովում ներառել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության ազգային ծրագրերի ավագ համակարգող, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանին:

9. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով քննարկման արդյունքները, նախ շնորհակալություն հայտնեց ձևավորված աշխատանքային խմբին կատարված աշխատանքների համար և առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել առկա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի՝ 1 տարի տևողությամբ (60 ECTS) և հեռակա ուսուցման՝ 1,5 տարի տևողությամբ (60 ECTS) ուսումնական պլանները:

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա և հեռակա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի ուսպլանների հաստատման որոշումն ընդունվեց՝ միաձայն քվեարկությամբ:

1.2. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 29.04.2025թ. կայացած թիվ 7 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել առկա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի (1 տարի, 60 ECTS) և հեռակա ուսուցման «Ստարտափների կառավարում» մագիստրոսական կրթական նոր ծրագրի (1,5 տարի, 60 ECTS) ուսումնական պլանները՝ քվեարկության 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի սահմանման և հաստատման մասին հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ԵՊՀ ռեկտորատի որոշմամբ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ստուգման և գրագողության (պլագիատ) հավանական դեպքերը բացահայտելու նպատակով ԵՊՀ-ն ձեռք է բերել «Turnitin similarity» ծրագիրը, որը հասանելի է ուսումնական գործընթացի կառավարման e-learning հարթակում: Ակադեմիական աշխատանքների

ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի սահմանման և հաստատման հարցը վերապահված է յուրաքանչյուր ֆակուլտետի գիտական խորհրդին և կարող է փոփոխվել ամեն տարի: Հավելեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2024-2025 ուստարում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի աշխատանքները ուսանողները սկսել են դեռևս սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից, իսկ այս պահանջը նոր է ուժի մեջ մտել, ամբիոնի վարիչների հետ նախնական քննարկման արդյունքում առաջարկ է հնչել՝ այս ուստարվա ակադեմիական աշխատանքների համար սահմանել ինքնատիպության տոկոսի ցածր շեմ՝ 65%: Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով իր խոսքը, առաջարկեց հերթագրվել՝ քննարկվող հարցի կապակցությամբ կարծիքներ և տեսակետներ հնչեցնելու համար:

2. Կարծիքներ հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Կ.Եղոյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ. Ա.Փոքրիկյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.թ. Լ.Մարտիրոսյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Աբրահամյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ղուկասյանը:

Գիտխորհրդի անդամները հիմնականում համակարծիք էին 2024-2025 ուստարվա ակադեմիական աշխատանքների համար ինքնատիպության տոկոսի ցածր շեմ սահմանելու հարցում: Բարձրաձայնված տեսակետներում պնդումը մեկն էր՝ ծրագիրը չկիրառել որպես պատժիչ գործիք, այլ ծառայեցնել բուն նպատակին՝ ակադեմիական ազնվության ապահովմանը և գիտակրթական մշակույթի զարգացմանը, հաշվի առնելով նորույթի ներդրման սկզբնական փուլի անհարմարությունները: Արտահայտված կարծիքներում վկայակոչվեցին նաև հանրապետությունում գործող այլ բուհերի նմանօրինակ փորձը, առաջարկներ հնչեցին ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու համար՝ ակադեմիական աշխատանքների ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի աստիճանավորման միջոցով գնահատել ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Հնչեցին նաև տեսակետներ, որ ոչ բոլոր ուսանողներին պետք է թույլատրվի ավարտական աշխատանք գրել, փոխարենը ցածր առաջադիմությամբ ուսանողները պետք է հանձնեն պետական քննություն մասնագիտական առանձին առարկաներից:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, ամփոփելով ծավալուն քննարկումը, առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար ինքնատիպության ընդունելի՝ 65% և նմանության ընդունելի՝ 35 % շեմը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմի սահմանման և հաստատման մասին որոշումն ընդունվեց՝ քվեարկությամբ:

2. ՈՐՈՇԵՑԻՆ.

Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդում ծավալված բովանդակային քննարկումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի համար սահմանել և հաստատել ինքնատիպության ընդունելի՝ 65% և նմանության ընդունելի՝ 35% շեմը՝ քվեարկության 27 կողմ, 0 դեմ, 1 ձեռնպահ արդյունքներով:

3. Ընթացիկ հարցեր

3.1 ԼՍԵՑԻՆ. Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ հարցը:

3.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ գիտխորհրդի այս ուստարվա 03.10.2024թ. թիվ 2 նիստում, ընթացիկ հարցերի շարքում, քննարկվել է ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման վերաբերյալ հարցը: Այդ նպատակով, գիտխորհրդի որոշմամբ, ստեղծվել է աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝ տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյան, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյան, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյան, և հանձնարարվել է ուսումնասիրել և վեր հանել ֆակուլտետի ենթակառուցվածքներին առնչվող և հրատապ լուծում պահանջող խնդիրները: Հավելեց, որ սույն աշխատանքային խմբին տրված դեկանի հանձնարարականից անցել է շուրջ 6 ամիս և հարցը զեկուցելու համար ձայնը փոխանցեց աշխատանքային խմբի ղեկավար, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանին:

2. Աշխատանքային խմբի ղեկավար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը նշեց, որ ֆակուլտետի բոլոր լսարաններում կատարել են լուսավորության ստուգման և չափագրման աշխատանքներ, փորձնական վերակահավորվել է 101 լսարանը՝ շարքերի նոր դասավորության հաշվին գրավոր քննությունների անցկացման արդյունավետությունը բարձրացել է: Հավելեց, որ ֆակուլտետի բոլոր լսարանների համար կոնկրետ խնդիրներն առանձնացված և հաշվառված են: Դրանք հիմնականում կապված են անբավարար լուսավորության, լսարանի մուտքի և ելքի սահմանափակումների՝ նստարանների տեղադիրքով պայմանավորված, գրատախտակից դասախոսի սեղանի անբավարար հեռավորության, նաև շերտավարագույրների, օդորակիչների, խելացի գրատախտակների գրիչների հետ:

3. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ այս նիստում աշխատանքային խմբից հաշվետվություն չեն ակնկալում, այս նիստում հարցի քննարկման նպատակը տրված հանձնարարակի կատարման ընթացքին է առնչվում՝ ի՞նչ փուլում են աշխատանքները: Հավելեց նաև, որ լուսավորության մասով արդեն ձեռնարկվել են աշխատանքներ՝ բոլոր կետային լույսերը կփոխարինվեն լեդ լույսերով,

աշխատանքներ են տարվել նաև ֆակուլտետի առաջին և նկուղային հարկերի վերանորոգման մասով, դրանք ներառված են 2025 թվականի շինաշխատանքներում:

4. Դոցենտ, տ.գ.թ. Գ.Ղուկասյանը նշեց, որ համակարգչային լսարաններում ևս խնդրներ կան, որոնք հրատապ լուծում են պահանջում:

5. Պրոֆեսոր, տ.գ.դ. Թ.Թորոսյանը մատնանշեց, որ բոլոր լսարանները պետք է ապահովված լինեն խելացի գրատախտակներով**:**

6. Աշխատանքային խմբի անդամ, ասիստենտ, տ.գ.թ. Կ.Սահակյանը նշեց, որ հիմնական փոփոխությունը նստարանների քանակի կրճատումն է լսարաններում, ինչը խնդրահարույց է փոքր լսարանների համար:

7. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը նշեց, որ սույն զեկույցը դիտարկվում է որպես միջանկյալ զեկույց, իսկ վերջնական տարբերակով զեկույցը կներկայացվի գիտխորհրդի հաջորդ նիստում:

3.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի ենթակառուցվածքների բարելավման նպատակով ստեղծված աշխատանքային խմբին տրված դեկանի հանձնարարականի վերաբերյալ, գիտխորհրդի հաջորդ նիստում, վերջնական տարբերակով զեկույցի ներկայացման պահանջը ընդունել ի գիտություն:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ***Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ***Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ***